ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
(ԱՐՄՍՏԱՏ)

« ____» _____ 20____ թ. №

Ձեր « ____ »_____ 20____ թ. №

ՄՈՒՇԵՂ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովսեփյան

Ի պատասխան Ձեր էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով ներկայացրած 15.11.2020թ. հ. 75313 հարցման՝ տեղեկացվում է Ձեզ հետևյալը.

«Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն՝ պաշտոնական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով (տես՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120755):

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում հստակ սահմանված է պաշտոնական վիճակագրության հասկացությունը: Այսպես՝ **պաշտոնական վիճակագրությունը** օրենքով լիազորված մարմինների կողմից *պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան, հանրային կյանքի էական և չափակցելի երևույթների թվային արտահայտությամբ* մշակված, արտադրված և տարածված, *բացառապես վիճակագրական ծրագրերում արտացոլված վիճակագրությունն է,* որը ներկայացուցչական հիմքով նկարագրում է Հայաստանի Հանրապետության տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական երևույթները:

Այս առումով հարկ է նշել, որ Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում հստակ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում *պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն են՝* հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերը: Նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ վիճակագրական ծրագրերը ներառում են երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տարեկան վիճակագրական ծրագիրը ներառում է պաշտոնական վիճակագրության արտադրողների կողմից իրականացվելիք բոլոր վիճակագրական հետազոտությունների նկարագրությունները և յուրաքանչյուր

ք. Երևան, 0010
Հանրապետության պողոտա,
Կառավարական 3 շենք
☎: (+37411) 52-42-13, Ֆաքս: (+37411) 52-19-21
Էլ. փոստ: info@armstat.am
https://www.armstat.am, http://www.armstatbank.am

հետազոտության համար տվյալների հավաքման մեթոդները, ռեսպոնդենտների ընդգրկվածության աստիճանը, ռեսպոնդենտների մասնակցության պարտադիր կամ կամավոր բնույթը, ինչպես նաև վիճակագրության այն տեսակի կամ վիճակագրական ռեգիստրների թվարկումը, որոնց համար հետազոտությունը կապահովի անհրաժեշտ տեղեկատվության ստացում:

Ամփոփելով վերոգրյալը հայտնվում է, որ Վիճակագրական կոմիտեն (ԱՐՄՍՏԱՏ)՝ որպես Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրության գլխավոր արտադրող, գործում է Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների, օգտագործողների, ռեսպոնդենտների և վարչական տվյալներ տրամադրողների հետ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի անդամների կողմից 2020թ. սեպտեմբերի 27-ից հետո վիճակագրական ծրագրերում պատերազմի ազդեցությունների վերաբերյալ տեղեկությունների արտացոլման վերաբերյալ Վիճակագրական կոմիտեն (ԱՐՄՍՏԱՏ) որևէ առաջարկ չի ստացել:

Ինչ վերաբերում է հայտարարված ռազմական դրության ժամանակ գործող հարաբերությունների կարգավորմանը, ապա դրանց կարգավորումն իրականացվում է «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքով, «Պաշտպանության մասին» օրենքով, մի շարք այլ օրենսդրական ակտերով, ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշմամբ, այդ օրենքներից բխող գաղտնի ընթացակարգով ընդունված ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան լիազոր մարմինների հետ համաձայնեցված ծրագրերի հիման վրա, որոնց վերաբերյալ գաղտնի տեղեկությունները չեն կարող փոխանցվել ֆիզիկական անձանց, ովքեր չունեն դրանց առնչվելու համապատասխան թույլտվություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
Գ. ԱՆԱՆՅԱՆ

Կատարող՝
Իրավաբանական բաժին
Հեռ.՝ 011 52-42-45